ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

էլ.փոստ VARDASHEN1@ mail. ru, հեռ. 096-48-83-82

28.12. 2016թ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետ
Պարոն Ռ. Աբրահամյանին

Կից ներկայացվում է Արարատի մարզի Վարդաշեն համայնքի ավագանու 25.12.2016թ թիվ 30, 31,32, 33,34 որոշումների կրկնօրինակները

Առդիր 14 /տասնչորս / էջ

Համայնքի ղեկավար Գ. Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

էլ.փոստ VARDASHENI@ mail. ru, հեռ. 091162071

Որոշում 30

25. 12. 2016թ

ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ << ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու հերթական թիվ 9 նիստի օրակարգը

1. Բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Արարատի մարզի Վարդաշեն համայնքի2017 թվականի << Տեղական տուրքերի և վճարների >> դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին
3. Վարդաշեն համայնքի 2017 թվականի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին

4.Համայնքապետարանի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

Ավագանիներ՝ կողմ 5 դեմ 0 ձեռնապահ 0

Հ. Թարվերդյան
Կ. Նիկալայան
Խ. Հայրապետյան
Գ. Հայրապետյան
Կ. Ալեքսանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Էլ.փոստ VARDASHENI@ mail.ru հեռ. 096 48 83 82

Որոշում 31
25. 12 . 2016թ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշեց՝

Վարդաշեն համայնքի 2016 թվականին տեղական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները

Պահուստային ֆոնդից /11.01.02.51/ 260000 /երկու հարյուր վաթսուն հազար/դրամ տեղափոխել՝

ա/ « Սոցիալապես անապահով անձանց աջակցություն » /10.07.01.54/
4729/ այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին՝ 60 000/վաթսուն հազար/ դրամ

բ/ «Կառավարման մարմնի պահպանման » /01.01.01.51/ 4112/ աշխատավարձ/
հոդվածին՝ 50 000/հիսուն հազար/ դրամ

գ/ «Մշակույթային միջոցառումների իրականացման » /08.02.01.51 /
4269/ հատուկ նպատակային այլ նյութեր / հոդվածին՝ 150 000/մեկ հարյուր հիսուն դրամ/

Ավագանի

կողմ 5 դեմ 0 ձեռնապահ 0

Հ. Թարվերդյան կողմ
Կ. Նիկալայան կողմ
Գ. Հայրապետյան կողմ
Խ. Հայրապետյան կողմ
Կ. Ալեքսանյան կողմ

Համայնքի ղեկավար Գ. Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Էլ.փոստ VARDASHENI@ mail. ru, հեռ. 096-48-83-82

Որոշում 32

25.12.2016թ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝ և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ , 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածի պահանջներով

Վարդաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթհազար հինգհարյուր/ դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/քսանհինգ հազար/դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000/երեսունհինգ հազար/ դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝1500 / հազար հինգ հարյուր/ դրամ,

20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500 / երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2/ համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/հազար հինգհարյուր/ դրամ.

բ/ բացի օբեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգմամ կամ արդիկանացման աշխատանքները,նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության, ապա , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի ,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով :

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ սենքերի գործառական նշանակության թոթոխություն, ապա սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինության, որի նկատմանբ կիրառվում են շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500/երկու հազար հինգհարյուր/ դրամ.

4.համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝150 000/ դրամ

5/համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար30000/՝ երեսուն հազար/ դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստած իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը տարվա համար սահմանվել է 50 000/հիսուն հազար/դրամ

7. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000/երկու հազար / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեքհազար / դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000/չորս հազար / դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000/տասհազար / դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000/ քսան հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000/երկուհազար / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեքհազար / դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000/չորս հազար / դրամ.

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000/տասհազար / դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000/քսան հազար / դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9/համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝25000/քսան հինգ հազար/ դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/ հիսուն հազար/ դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար 200 000/ երկու հարյուր հազար/ դրամ.

դ. խաղատների համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

ե. շահումով խաղերի համար՝250000/ երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100 000/ հարյուր հազար/ դրամ.

10.համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3000 /երեք հազար/ դրամ.

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/ հինգ հազար / դրամ.

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000/ ութհազար/ դրամ.

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000/ տաս հազար/ դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000/ տասնհինգ հազար / դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝500 /հինգ հարյուր/ դրամ.

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000/ մեկ հազար/ դրամ.

51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000/երեք հազար/ դրամ.

101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000/չորս հազար/ դրամ.

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/հինգ հազար/ դրամ.

501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000/ վեց հազար/ դրամ

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000/ հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500/հազարհազար հինգ հարյուր/ դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 250դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով1000/մեկ հազար/ դրամ

11.համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝5000 /հինգհազար/ դրամ.

9. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000/հիսունհազար /դրամ:

1. Սույն հոդվածով սահմանված 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համար օգտագործել է 0,5 գործակիցը:

Տեղական վճարների դրույքաչափերը

ա/ համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարական ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝5000/հինգ հազար/դրամ

բհամայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 500/հինգ հարյուր/ դրամ

գհամայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար1000 դրամ.

Համայնքի տարածքում սահմանել աղբահանության վճար

Կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար 0 դրամ

Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար առավելագույն 5000/հինգ հազար/դրամ

Ավագանիներ՝ կողմ 5 դեմ 0 ձեռնապահ 0

Հակոբ Թարվերդյան
Կարեն Նիկալայան
Գևորգ Հայրապետյան
Խաչատուր Հայրապետյան
Կոլյա Ալեքսանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

էլ.փոստ VARDASHENI@ mail. ru, հեռ. 096-48-83-82,

Որոշում 33

25.12.2016թ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով

Ավագանին որոշեց՝

Հաստատել Արարատի մարզի Վարդաշեն համայնքի 2017 թվականի տեղական բյուջեի նախագիծը

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	հազ.դրամ
Հողի հարկ	1300.0
Գույքահարկ	1000.0
Հողի վարձավճար	250.0
Այլ գույքից վարձավճար	72.0
Տեղական տուրք	20.0
Դոտացիա	11056.7
Ընդամենը եկամուտներ	13698.7

Ծախսեր

		հազար դրամ
	/ 01.01.01.51 / Կառավարման մարմնի պահպանում	9208.0
4111	Աշխատավարձ	7730.0
4212	Էներգիայի ծախս	200.0
4234	Թերթերի բաժանորդագրություն	130.0
4261	Գրասենյակային նյութեր	180.0
4264	Տրանսպորտային նյութեր՝	600.0
	որից	
ա/վառելիք		350.0
բ/պահեստամասեր		250.0
4215	Ավտոմեքենայի ապահովագրություն	25.0
4823	Ավտոմեքենայի տեխ. զննում	12. 0
4214	Ինտերնետ կապի ձեռք բերում	96.0
4231	<< Միսյան>> համայնքների միությանը	80.0
4232	Համակարգչային ծառայություններ/Ցենզոր /	35.0
4269	Նվերներ	120.0
	/ 01.06.01.52 / Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվություն	207.0
4241	Մասնագիտական ծառայություն / կադաստրին ծառ. դիմաց /	200.0
4819	Համայնքների միությանը	7.0
	/10.07.01.55 /Հասարակական կազմակերպություններին աջակցություն	40.0
4819	Եվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	
որից՝	<<ԱՐԱՐԱՏ -2001թ>>	40.0
	/05.01.01.51 / Աղբահանություն և սանիտարական	728.0
4213	փողոցների սան. մաքրում	728.0

/08.02.04.51 / Մշակույթային միջոցառումների իրականացում	80.0
4269 նվերներ և միջոցառումների անցկացում	80.0
/ 10.07.01.54 / Սոցիալապես անապահով անձանց աջակցություն	980.0
4729 Ֆինանսական աջակցություն	800.0
4726 Հուղարկավորության նպաստ	180.0
/07.06.02.51/ Առողջապահություն /այլ դասերի չպատկանող/	100.0
4639 այլ ընթացիկ դրամաշնորհներ/ֆին աջակցություն Գետազատի բուժկետին/	100.0
/06.04.01.53/ Արտաքին լուսավորության ցանցի պահպանման և շահագործման ծախսեր	200.0
4212 էներգիայի ծախս	100.0
4269 Նյութեր	100.0
/09.05.01.51/ Արտադպրոցական դաստիարակություն	50. 0
4637 Ընթացիկ դրամաշնորհներ/Արևշատի երաժշտական դպրոցին/	50.0
/11.01.02.51/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	2105.7
Ընդամենը վարչական բյուջե	13698

Ավագանիներ՝ կողմ 5 դեմ 0 ձեռնապահ 0

Թարվերդյան Հակոբ

Նիկալայան Կարեն

Հայրապետյան Գևորգ

Հայրապետյան Խաչատուր

Ալեքսանյան Կոլյա

Համայնքի ղեկավար՝ Գ.Բարխոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

էլ.փոստ VARDASHENI@ mail. ru, հեռ. 077 18 93 28

ՈՐՈՇՈՒՄ N34

25 դեկտեմբերի 2016թվականի

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է.

Հաստատել գույքագրման հանձնաժողովի 25.12.2016թ-ի կազմած ակտը Համայնքապետարանի գույքագրման արդյունքների վերաբերյալ:

կող 5 դեմ0 ձեռնպահ0

Ավագանիներ՝

Հ.Թարվերդյան
Կ.Նիկալայան
Գ.Հայրապետյան
Խ.Հայրապետյան
Կ.Ալեքսանյան

Համայնքի ղեկավար՝ Գ.Բարխոյան